Վարդուհի Վարդերեսյան

ՀԽՍՀ ժողովրդական արտիստուհի, ժողովուրդների բարեկամության շքանշանակիր

Ծնվել է 1928թ. Բուխարեստում:

1946թ. հայրենադարձվել է: Սովորել է Գյումրու դրամատիկական թատրոնին կից ստուդիայում:

1947 թվականից եղել է նույն թատրոնի դերասանուհի, 1958թ.-ից՝ Գ. Սունդուկյանի անվան թատրոնի դերասանուհի: Կերտել է բազմաթիվ կերպարներ՝ Դեզդեմոնա (Շեքսպիրի «Օթելլո»), Հուդիթ (Գուցկովի «Ուրիել Ակոստա»), Նուարդ (Ն. Զարյանի «Արա Գեղեցիկ»), Կեկել (Սունդուկյանի «Պեպո») և այլն: Դերասանուհու Ջոնիի դերակատարումը (Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է») հայ դերասանական արվեստի նշանակալի երևույթ է:

1955թ.-ից նկարահանվել է կինոյում, դերերից են՝ Մարգարիտ («Պատվի համար»), Մարիամ («Մոր սիրտը»), տիկին Սաթեն («Թաղականին կնիկը») և այլն: